

վուսած կլինէր մեր որբանոցների վիճակը. նորա մահուանից յետոյ ո՞վ պիտի մտածէ այդ կարեւոր գործի համար: Մեր ժողովուրդը ամեն տեղ իւր յարգանքը յայտնեց դէպի հանգուցեալի յիշատակը հոգեհանգիստ կատարելով Ս. Հոգեւոր Տիրոջ կարգադրութեան համաձայն: Կարծում ենք մեր յարգանքը ամենաշու կերպով այն ժամանակ ցոյց տուած կլինենք: Երբ նորա սկսած որբերի խնամատարութեան գործը ապահով վիճակի մէջ դնենք: Զպէտք է մտանանք որ հանգուցեալը որբերին և անկեղեցուն է նուիրել ոչ միայն իւր ժամանակն ու աշխատութիւնը այլ և իւր զոյքը: Руск. Вѣдомости լրագրի՝ բաժնեակրութիւնից ստացուող արդիւնքի մի մասը կտակել է իւր սիրած որբերին մատենադարանը Մայր Աթոռին հաղարտական բուրի այլ և այլ բարեգործական հաստատութիւնների՝ 5000 ռ. թողել է: Հոգեւոր Տիրոջ արամազրութեան որ դարձեալ ազգայնների կամ բարեգործական նպատակների համար պիտի գործադրուի:

Օրհնեալ լինի Գրիգոր Զանգեանի յիշատակը:



ԵՐԿՐԱԳՈՐԺԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ

ԳԻՏԵԼԻԳՆԵՐ.

(Նարումակութիւն) *

Թէ Ի՞նչ ԳԻՏ ԳԻՏԵԼԻԳՆԵՐ Է ՏԱՓԱՆԵԼ ԶՈՂԸ **

Գեւ մինչև այժմ էլ շատ հոգաւորներ և դիւղացիներ հոգի տալով երկրագործութեան մէջ երկրորդական բան են համարում մինչդեռ նորագոյն դիւղանտեսական փորձերը շատ պարզ կերպով ցոյց են տալիս,

որ դա մի անհրաժեշտ գործ է և պէտք է կատարուի նոյնքան խնամով, ինչքան և վարը: Տափանն ևս որի միջոցով կատարում է այդ գործողութիւնը ի թիւս այլ և այլ դիւղանտեսական գործիքների երկրագործութեան մէջ ունի իր կարեւոր նշանակութիւնը:

Հողի պաղարկը լինելը ոչ միայն նրա բաղադրութեան, որպիսութիւնից կախում ունի այլ և վերին շերտի կազմութիւնից որ որոշ չափով կարող է նպաստել մատչելի դարձնելու մթնոլորդի խոնավութիւնը և օդը փառած հողի ներքին մասերը թափանցելու: Ժողովրդի ունեցած այն հայեացքը թէ տափանքը երկրագործութեան համար ոչ մի էական նշանակութիւն չունի, դժբախտաբար մինչև այժմ էլ խորը կերպով արմատացած է, որի համար էլ մինչև Վ. դարու վերջը տափանի կազմութեան մասին բոլորովին ուշք չէին դարձրել թէ արտասահմանում և թէ նուստատանում և բաւականանում էին միմիայն փայտեայ տափաններով, երբեք միայն և այն էլ վերջերս փայտեայ տափանների տեղ գործածելով երկաթեայ տափաններ:

Տափանը յաճախ համարում է մի շատ անհրաժեշտ գործիք փարած հողը աւելի փափկացնելու և երեսը ցանքի համար վերջնականապէս փափկացնելու համար: Եթէ սերմերը հողի մէջ ծածկելու համար հոգադործը չունի համապատասխան գործիքներ՝ մշնածածկիչ (запашникъ), կարող է գործ դնել դարձեալ տափան: Տափանը միևնոյն ժամանակ արմատախիլ է անում և հաւաքում աւելորդ խոտերը և խոտնում հողի հետ զանազան պարարտացուցիչ նիւթեր, կորստում է ծիւղերը և արմատախիլ անում մոմուռներ և այսպէս մաքրում կամ թարմացնում է մարդաշահութիւնը: Այն նաև սխալ կարծիք յայտնողների որոնք տափանքը բացարձակապէս փնասկար են համարում իր տափանը չորացնում ցամաքեցնում է հողը բայց ինչհետև ակր տափաններով՝ հողը աւելի միջոց կունենայ իր մէջ խոնավութիւն պահելու:

Տափանը միայն այն ժամանակ կարող է սպասած օգուտը տալ երբ գիտեն նրա գոր-

1. Մշակ № 151.

* Տես Աւարտ համար է. եր. 361:

** Այս գործողութիւն կատարող գործիք կայաց մէջ զանազան քեղերում զանազան անուններ ունի, փոքր, դրմիկ, մանկիւն և այլն:

ծաղրութեան եղանակը և երբ իւրաքանչիւր տեսակ հողի համար առանձին տեսակի յարմարաւոր տափան են գործադրում (թէ և գիւղատարար մեր միջոց ունեցող գիւղացիները այնքան ժլատ են, որ բաւական են համարում զանազան տեսակ յատկութիւն ունեցող հողի համար միայն մի տեսակի տափան գործ ածել):

Աւելի առաջ ունենալով, որ տափանները գիւղատնտեսութեան մէջ շատ ընդարձակ և բազմատեսակ գործադրութիւն ունենալ անհրաժեշտ է, որ իւրաքանչիւր հողատեր, համաձայն տեղական պահանջների, ունենայ մի քանի տեսակի տափաններ (թեթեւ ծանր, շարժական, զսպանակաւոր և այլն), այն ժամանակ միայն հողը տափանելով կարելի կլինի հասնել որոշ նպատակի:

Կարելի է խորհուրդ տալ իւրաքանչիւր մեծ և փոքր հողատիրոջ ունենալ երեք տեսակի տափան. ա. փայտեայ թեթեւ տեսակի, նոյնպիսի փայտեայ ատամներով հանդերձ, ք. փայտեայ տափան երկար և երկաթեայ ատամներով և գ. ծանր, երկաթեայ այս կամ այն տեսակի տափան:

Թեթեւ փայտեայ տափաններ կարելի է գործ ածել վարեյահողերը ցանքի համար պտորաստելու, ցանելուց յետոյ սերմեր ծածկելու և յորդառատ անձրեւներից յետոյ ցանած դաշտերի հողի կեղեք ոչնչացնելու համար: Նրանով տափանել կարելի է սեւահողերը: Երկաթեայ մատներ կամ ատամներ ունեցող փայտեայ տափանները, որ մինչև 2 արշ. լայնութեամբ տափանում են, ծառայում են հողակոյտեր ջարդելու, աւելորդ ու ֆլատաւար, մանաւանդ մաղցող բոյսերը ոչնչացնելու և սերմերը հողի տակ ծածկելու համար: Իսկ ծանր երկաթեայ կամ պողպատեայ տափանները, որ մինչև $3\frac{1}{2}$ արշ. լայնութեամբ միանգամից են տափնում, ծառայում են հողը խոր կերպով փորելու, փափկացնելու, աւելորդ խոտերը վերջնականապէս քարելու, հողը ցանքի համար խնամաւ կերպով պտորաստելու, մարգագետինների մէջ հնացած և խոր արմատ բռնած ճիւղերը կտրատելու և նրանց մէջ գոյութիւն առած մամուռն ոչնչացնելու համար: Այսպիսով կտրատելով ճիւղերը,

տափանները միջոց են տալիս օդին և լոյսին ազատ կերպով թափանցել հողի մէջ և բարեւար ազդեցութիւն ունենալ նրա արդիւնաւորութեան վրայ: Այս վերջին երկու տեսակ տափաններով պէտք է վարել կաւային ծանր արտերը. քարքարոտ, բոյսերի արմատներով հարուստ և անհարթ տեղեր տափանելու համար կայ զսպանակաւոր տափան, որի ատամները բացւում են և քարի կամ մի որևէ արգելքի հանգիստի չեն կոտրւում և տափանում է միանգամից 2 արշ. 10 վերշ. լայնութեամբ:

Սովորաբար աշնան վարած արտը նոյն ժամանակ չպէտք է տափանել, աւելի նպատակաւոր մար համարւում և նոյն իսկ օգտակար դարձանք կատարել այդ նախ նրա համար, որ հողի մէջ եղած աւելորդ արմատներն և մինչև այդ ժամանակ բուսած աւելորդ բոյսերը տափանի միջոցով դուրս են գալիս և ոչնչանում և երկրորդ, որ հողի մէջ պահպանւում է զարնանային խոնաւութիւն և եթէ այդ ժամանակ բուսականութեան մի աննշան մասն անգամ արմատահան լինի, չբարեւար է երկիւղ կրել: Միայն կրկնում եմ աշխատել պէտք է խնամքով և ուշադրութեամբ կատարել այդ: Գարնանը հարկաւոր է հողը տափանել այն ժամանակ, երբ երկիրը «ցնցւում արթնանում» է, երբ ձին չի թաղւում նրա մէջ և տափանի մատները չեն ծածկւում ցետով, այլ ցրւում է հողը: Այսպիսի բայց աւելի թեթեւ և զգուշաւոր տափանելը շատ օգտակար է գետնախնձորի, եղիպտացորենի և մի քանի այլ բոյսերի համար: Տափանելու ժամանակ մի կողմը պտոյտ գործելիս պէտք է խիստ զգուշ լինել, որ չլինի թէ անզգոյշ շարժումից բոյսերից շատերը արմատահան լինեն:

Վերջին ժամանակներս վաճառքի են գուրս եկել տափանների բազմաթիւ և տարբեր տեսակները: Դսկապէս այս կամ այն տեսակի ընտրութիւնը այնքան զիւր չի խաղում որքան գործածելու եղանակի հետ ծանօթ լինելը: Այսպիսի դէպքում էական նշանակութիւն կարող է ունենալ նաև այն, երբ մարդ կանոնաւոր հասկացողութիւն ունի հողի և նրա յատկութեանց, նոյնպէս և կլի

մայի մասին: Այդ պատճառով էլ այն բոլոր խորհուրդները որ հաղորդում են օտար յայտնի և ընտիր երկրագործական ձեռնարկները, շնորհիւ մեր հողի այս կամ՝ այն յառկութեան և կլիմայական այլ և այլ պայմանների, շատ անգամ՝ կարող են մեզ համար բուրբոլին անպէտք լինել: Ամեն տեսակ հողի և ամեն տեսակ կլիմայի մէջ տափանքու վերարեւեալ ընդհանուր հիմնական կանոնները սրանք են. երբ հողը ամբողջապէս ցեխ է, չպէտք է տափանել: Եթէ ոչ հողի ծախտիները կծածկուին և հողը այլևս չի կարող հաղորդակցութիւն ունենալ արտաքին աշխարհի հետ, կգժեւարանայ օդի լոյսի և խոնաւութեան ներս թափանցելը: Հողը գժեւարութեամբ կտաքանայ, այդ պատճառով էլ նրաներքին գործողութիւնները կանոնաւոր ընթացք չեն ունենայ: Բացի դրանից, եթէ հողը աւելի կուային է և ցեխոտ, տափանով հողից պոկած խոնաւ կոշտերը սառաիկ կշորանան և այն ժամանակ աւելի գժեւար կլինի ապաղպում՝ նրանց փշերը: Ամեն անգամ տափանելիս պէտք է գործիքը մաքրել ձիմերից և մասներին փաթեթաւորած զանազան բոյսերից, հակառակ դէպքում հողի մակերևոյթի վրայ աւելորդ դէղեր կդրանան: Սգտակար է և այն, որ քանի կարճ լծած լինի տափանը, այնքան աւելի քիչ կմննի նրա տափանները հողի մէջ: Զիտները և կամ՝ եղները որքան արագ քայլերով յառաջ տանեն տափանը, այնքան աւելի կիտակի և կիխրի հողը և սովորաբար քիչ էլ կկեղտոտուի և աւելորդ բոյսեր կփաթեթուեն տափանին: Բայց երբ կարճ է լծած տափանը և ձին կամ՝ եղը քաշում են ոչ միատեսակ և հաւաւար չափով, այն ժամանակ հողը լաւ չի փափկի և իզուր տեղը տանջանք կպատճառէ կենդանուն: Այսպիսով, ըստ յարմարութեան, ընտրելով թիւի և կամ՝ ծանր տեսակի տափանների, աշխատանքը հանգարտ կամ՝ արագ կերպով կատարելով հողատէրը, նայած հողի պահանջներին, հարաւորութիւն կունենայ փոփոխել աշխատանքի ձևը:

Թէ տափանի տափաններն ինչ խորութեամբ են մանում հողի մէջ, այդ բանը ոչ միայն հողի յատկութիւնից կախում

ունի, այլ գլխաւորապէս գործիքի ծանրութիւնից, այդ պատճառով էլ տափան ընտրելիս հարկաւոր է միշտ այդ հանգամանքը աչքի առաջ ունենալ: Ցափանելիս որպէս զի շատ թիւի տափանների տափանները հողի մէջ որոշ չափով թաղուեն, ստիպուած պէտք է նրա շրջանակի վրայ մի որևէ ծանրութիւն դնել, ինչպէս օրինակ, քար, ձիւ և այլն. ուշադրութիւն պէտք է դարձնել նաև, որ տափանի տափանները հաւասար հեռաւորութեան վերայ գտնուեն, որպէսզի տափանելը կանոնաւոր տեղի ունենայ և խրաքանչիւր տափան հողի մէջ մի առանձին տեղ անցկացնէ:

Պինգ կաւահողի արտերը պէտք է նախ և առաջ տափանել այն ուղղութեամբ, ինչ ուղղութեամբ որ խոփն է վարել, իսկ յետոյ՝ դրա հակառակ ուղղութեամբ, նախ՝ կլինին ուղղահայեաց կամ՝ քիչ թեք կերպով, իսկ փափուկ՝ սեւահողով կամ՝ աւազով հարուստ վարելահողերը, որոնք հեշտութեամբ են վարւում և տափանում, պէտք է ուղղակի տափանել վարի հակառակ ուղղութեամբ: Կաւահողով հարուստ վարելահողերը պէտք է աւելի շուտ շուտ տափանել, քան միւսները: Այդը հերկելուց մի շարաթ յետոյ պէտք է խիղճն տափանել արար, որպէսզի նրանով փափկացրած հողը աւելի յաւ անցկացնէ իր մէջ օդ և խոնաւութիւն, ապր կարճ ժամանակուայ մէջ այրելու և փթեցնելու համար: Կարծր և միջակ հողը մի մշակը երկաթեայ տափանին երկու ձի* լծած կարող է մի օրուայ մէջ տափանել 1½-2 գեսետին երկու անգամ՝ կամ՝ ինչպէս հայ գիւղացիք են ստում՝ երկու երես: Որքան լայն լինի տափանը, որքան փափուկ հողը և որքան յարմար լինի եղանակը, այնքան աւելի շատ գործ կկատարուի, անքան աւելի մեծ տարածութիւն կտափանուի: Ահի անգամից հողի մէկ սաժ. տարածութիւն կարող տափանել, որ մեծութեամբ միջին տեսակից է համարւում մի յարմարաւոր օրուայ մէջ 4 դես, վարելահող կտափանէ:

* Զիով ցափանը կգով ցափանիկն աւելի օգտակար է ու անշո:

ԹԷ ԻՇՆԶ ՕԳՈՒՏ ՈՒՆԻ ՀՈԳԸ ՀԱՐԹԵԼԸ
(укамывание)

Տափանկուց և կանաչ-կանաչ հնձելիք բոյսերի արտերը ցանկուց յետոյ արտի երեսի մնացած կոշտ հողերը ցրուել հարթելու, թեթե հողերով հարուստ արտերը կոխելու, պնդացնելու, երկրի մէջ աւելի խոնաւութիւն պահելու պատճառով բաց մնացած աւելորդ ծախտիքները փակելու, արմատապառուղ բոյսերը գետնի տակ լաւ աճելու, մանր սերմերը հողի մէջ թաղելու և անձրեւից յետոյ կեղեւ բռնած արտի երեսը փափկացնելու համար դործ են ածուում հարթիչ (камонка) գործիքների որոնք լինում են տարբեր տեսակի և որոնցից ամենից օգտակարը և յարմարը համարուում է ոչ հարթ տեսակը: Նրանցով կարելի է փափկացնել հողի մակերևոյթը, նրանցով կարելի է դործ սկսել աւելի ժամանակ, մինչև անգամ երբ բոյսը բարձրացել է մինչև 1/4 արշին բարձրութեան, եթէ միայն արտը որոշ չափով չոր է, որպէսզի հողը դործիքին չկպչի:

Ցանքեր հարթելը օգտակար է, երբ հողի վերեւի շերտը չոր է, դուրի է խոնաւութիւնից, որովհետև այդպիսի հողի մէջ ընկած սերմերը ծիւր արձակելու համար չեն գտնում բաւականաչափ խոնաւութիւն, հարթելը միջոց է տալիս հողի վերին շերտին աւելի խոր և ջրերով հարուստ շերտերից խոնաւութիւն ծծել, իսկ եթէ վերին շերտը առանց այն էլ խոնաւ է, հարթելով մենք նպատաւով կլինենք հողի նոյն իսկ խորը գտնուող շերտերին շուտափոյթ չորանալուն, որով և ծիւրերը կգծուարանան յաջող կերպով զարգանալ:

ԹԷ ԻՇՆԶՊԵՍ ՊԷՏԲ Է ՔԱՂՀԱՆԵԼ ԱՐՏԸ.

Վարուցանքը վերջացնելուց յետոյ գիւղացին ապագայում յաջող բերք ստանալու համար գեւ մինչև հունիսը շատ թեւեւ մանր մուկեր, բայց անհրաժեշտ դործեր ունի կատարելու: Այսպէս օրինակ հարկաւոր է պոկել անպէտք խոտերը կամ ինչպէս ասում են քաղհան ա-

նել, որ կատարուում է կամ ձեռքով և կամ բրիչ կոշուած գործիքով և որ կատարուում է ձեռքով և ձիով: Անհրաժեշտ է նաև արտի երեսի դուրս եկած քարերը ժողովել, եթէ ջրարբի են հողերը, առուներ անցկացնել և ջրել և այլն:

Ամենքին յայտնի է, որ դարնան վերջի-րին հացահատիկների ծիւրերի հետ միասին դուրս են գալիս անպէտք բոյսեր, որոնք վնասում են ցանքերին: Այս վնասակար խոտերը երկու կերպ են առաջ գալիս սերմերից և արմատներից: Արքան բեղարած լինի արտը, այնքան նա աւելի հարուստ կլինի վնասակար բոյսերով: Անպէտք սերմերը ընկնում են հողի մէջ կամ հացարոյսերի սերմերի հետ միասին, կամ արտը պարարտացնելու ժամանակ և կամ քամիներն են բերում ուրիշ տեղերից: Բոլորովին վերջացնել վնասակար բոյսերի սերմերը, անկարելի է, յամենայն դէպս պէտք է աշխատել դրանց շատանալու պատճառները վերացնել, որի համար հարկաւոր է նախ արտերը լաւ մշակել, մաքուր սերմեր ցանել և միջակներին մէջ եղած խոտերը գեւ բոլորովին կանաչ դուրթեան մէջ քաղել: Երբ արտի միջ խիստ առատ կերպով բուսած լինեն զանազան անպէտք խոտեր, ինչպէս օրինակ վայրի մանանխ, վայրի բողկ, դեղին ու մանր ծաղիկներ ունեցող առուցոյ, որոնք և այլ անպէտք բոյսեր, պէտք է գեւ չհասած, բոլորովին կանաչ դուրթեան մէջ արմատներով դուրս հանել, իսկ եթէ հողը հանգիստ է թողած, խոտերը գեւ չծաղկած պէտք է հերկել ամբողջ արտը և կամ երկաթէ տափանով խոտը տափանել, որպէսզի աւելորդ բոյսերը գեւ սերմեր չկազմած արմատախիլ լինեն և չորանան: Բայց աւելի լաւ կլինի դարնանը նախ մի թեթե վարել, ապա եղանակը չորային լինելուց յետոյ երկաթէ տափանով տափանել և միջանի օրից յետոյ ցանել ու նորից տափանել:

Այն խոտերը, որոնք արմատներիցն են առաջ գալիս, կարելի է այս կերպ վերջացնել տալ: Երբ արտը հանգիստ է վայելում, չոր եղանակին խորունկ կերպով պէտք է վարել և երեք չորս օր լաւ չորանալուց յետոյ նախ երկայնութեամբ և ապա լայնութեամբ

1. Միայն զարու եւ խրիուկի համար պատրաստած հողի երեսը չի կարելի հարել հարիւրով:

կրկաթէ, տափանով տափանելի որից յետոյ անմիջապէս հարկաւոր է հաւաքել խոտերի արմատները: Որքան շատ կրկնուի այս վերջին դործողութիւնը, այնքան աւելի կ'աւանդուի աւելորդ բոյսերը:

Այս կերպ կերպ առաջացող խոտերը աւելի հեշտ կերպով կ'աւաքուեն, եթէ արտի մէջ զետեմանաձոր, կաղամբ, ձակնդեղ և այլ այս տեսակ բոյսեր ցանուեն որովհետեւ սրանց մէջ պարսպ մնացած տեղերը յաճախակի փորուելուց, նրանք արմատահան կլինեն և կը չորանան: Խոնաւ արտերը չորացնելով, ջուր սիրող բոյսերը կ'չորանան: Եթէ արտի երեսին կիր ցանենք, անպէտք խոտերը դարձեալ կ'ոչնչանան:

Քաղհանել կարելի է հողի ոչ շատ խոնաւ և ոչ էլ շատ չոր ժամանակը, պատճառ որ խոնաւ ժամանակուայ պոկած և վայր ձգած խոտերը կարող են նորից աճել, իսկ չոր ժամանակը, մանաւանդ եթէ հողը կաւային է, նրանք արմատով չեն դուրս գալիս, միայն վերևի մասերն են պոկուում: Թողնելով արմատը հողի մէջ, այնպէս որ մի քանի ժամանակից յետոյ կարող է բոյսը նորից աճել: Յայտնի է, որ շատ հողատէրեր և զիւղացիներ աշխատում են տարեց տարի վարելուց և տափանելուց յետոյ արտերի երեսին դուրս եկած քարերը հաւաքել, համարելով այդ ցանքերին մնաստակար: Բայց վերջին փորձերը ցոյց են տալիս որ սխալ է այդ: Բարձրանալով օդի տաքութեան աստիճանը, կրաքարանայ նաեւ հողի տաքութեան աստիճանը, մանաւանդ, երբ հողը հարուստ է քարերով: Ընդհակառակը օդը սառչելով, քարքարոտ հողերն ևս արագապէս պաղում են: Այդ բանը բացատրւում է նրանով, որ քարերը տաքութիւն լաւ հաղորդող մարմիններ են: Բայց այնուամենայնիւ դարձեալ, եթէ քարերը շատ են և խոշոր, պէտք է մի մասը հաւաքել, որպէսզի բոյսերը ծածկուած չմնան և իզուր տեղ տարածութիւն չբռնեն:

Որքան քարեր շատ լինեն արտի մէջ, այնքան նրանց մէջ մնացած հողի տարածութիւնը խոնաւ կլինի, որովհետեւ անձրեւային ժամանակ քարերը փռուածքի դեր խաղալով, պահում են ջուրը հողի վերին շերտերում:

Իսկ երաշտութեան ժամանակ արդեւք են դառնում հողի ներքին շերտերի-խանձարուների մէջ իրենց տակ գտնուող ջրերի գոլորշիացման, ծառայում են իրեն ծածկոց և որովհետեւ ամառը բոյսերը մնասում են աւելի խոնաւութեան պակասութիւնից, քան առատութիւնից, այդ պատճառով էլ քարերի այս տեսակ ներգործութիւնը պէտք է օգտակար համարել: Եթէ քարերի քանակութիւնը հողի ծաւալի 30% չի անցկենում, հունձը առատ կլինի, որից աւելին արդէն մնաստակար է համարւում: Ամենալաւ կերպով են ներգործում քարերը, երբ նրանց ծաւալը ամբողջ հողի ծաւալի 10—20% է կազմում: Երբ հողը չափից դուրս թեթեւ է, արտում քարեր թողնելը դարձեալ օգտակար է, որպէսզի նրանք իրենց ծանրութեամբ հողը կոխելով մասնիկները իրար միացնեն: Իսկ երբ հողը կապոյտ կաւ է, մանր քարերը կարգելեն հողի մասերը պինդ կերպով իրար կպչել և իրենք տաքանալով, կտաքացնեն նաեւ հողի շերտը:

(Կը շարունակուի):

Գ. Ղ.



ՇԻՐԱԿԻ ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՅ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Ա.

ԳՈՒՂՈՅՆՆՅՈՒՆՆԵՐ.

Գուղոյնց տունը Ղ. զիւղի մէջ առաջնակարգ տներից մէկն է: Տան նահապետ (տան մենծ) Թորոսը 76 տարիքն կըրած՝ միջակ հասակով մի ալեգարդ ձերուծի է: Նրա շարժուածքից և նիստ ու կացից երեւում է, որ զեռ ևս չի հանգել իւր մէջ կորովն ու եռանդը, այլ ընդհակառակն տարիքն աւելանալով՝ նա աւելի կրակոտ և դործունեայ է դառել: Թորոս արարը թէև գաւաղանը ձեռից վայր չի բցում, իւր անրաժան ընկերն